ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀՀ, 1101, ք.Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոցի 0
Հեռ. +374 (231) 53663
Էլ. փոստ: info@ejmiatsin.am

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЭРИЯ
ГОРОДА ВАГАРШАПАТ
РА, 1101, г. Эчмиадзин, ул. Св. М. Маштоца 0
Тел.: +374 (231) 53663
Эл.почта: info@ejmiatsin.am

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
Address: 0 St. M. Mashtots Str., 1101, Ejmiatsin, RA, Tel. +374 (231) 53663. E-mail: info@ejmiatsin.am

№ 1016 «17» Դեկտեմբեր 2025 թ.

«ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ՄԱՆԹԱՐԼՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

Հարգելի՛ տիկին Մանթարլյան,

Վաղարշապատի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024 թվականի դեկտեմբերի 26-ին կնքվել է N «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-2» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), իսկ 2024 թվականի դեկտեմբերի 30-ին՝ Գնորդի, ենթակա ՀՈԱԿ-ների (այսուհետ՝ Երրորդ կողմ) և Վաճառողի միջև կնքվել են համապատասխան համաձայնագրերը:

Համաձայն Պայմանագրի 1.1 կետի՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին (Երրորդ կողմին) մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և նույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը, իսկ Գնորդը (Երրորդ կողմը) պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Համաձայն Պայմանագրի 2.1.5 կետի՝ Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում Գնորդն իրավունք ունի իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Համաձայն Պայմանագրի 2.1.6 կետի՝ Գնորդն իրավունք ունի Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը,

իսկ համաձայն 2.1.7.1 կետի՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Համաձայն Պայմանագրի 2.4.9 կետի՝ Վաճառողը պարտավոր է Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2025 թվականի մարտի 7-ին Վաղարշապատի համայնքապետարան է մուտքագրվել «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի գրությունն այն մասին, որ Վաճառողը խնդրում է ամբողջությամբ լուծել Վաղարշապատի համայնքապետարանի և «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-2» ծածկագրով գնման պայմանագիրը, ինչպես նաև դրա մաս կազմող 2024 թվականի դեկտեմբերի 30-ին Գնորդի, ենթակա ՀՈԱԿ-ների և Վաճառողի միջև կնքված համապատասխան համաձայնագրերը:

Ելնելով վերոգրյալից՝ հիմք ընդունելով 2024 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-2» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7 կետը, «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի 2025 թվականի մարտի 7-ի գրությունը, Վաղարշապատի համայնքապետարանը, 2025 թվականի մարտի 17-ից ամբողջությամբ լուծում է «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հետ 2024 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-2» ծածկագրով գնման պայմանագիրը, ինչպես նաև դրա մաս կազմող 2024 թվականի դեկտեմբերի 30-ին Գնորդի, ենթակա ՀՈԱԿ-ների և Վաճառողի միջև կնքված համապատասխան համաձայնագրերը՝ 1284328 /մեկ միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր քսանութ/ ՀՀ դրամի չափով:

Տեղեկացնում ենք, որ «ԷՔՍՊՐԵՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն պարտավոր է 10 /տաս/ բանկային օրվա ընթացքում Վաղարշապատի համայնքապետարանի գանձապետական «900325151109» հաշվեհամարին վճարել N «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-2» ծածկագրով գնման պայմանագրի որակավորման ապահովումը՝ 247920 /երկու հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր քսան/ ՀՀ դրամ գումարի չափով, պայմանագրի ապահովումը՝ 165280 /մեկ հարյուր վաթսունհինգ հազար երկու հարյուր ութսուն/ ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված տույժերը, որը կազմել է 130360 /մեկ հարյուր երեսուն հազար երեք հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ /1284328 * 0,05% * 203 աշխատանքային օր/:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն Պայմանագրի 2.1.6 և 2.4.9 կետերի, հետագայում ևս Վաճառողից կարող են պահանջվել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը, ինչպես նաև պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

Հաշվարկված գումարները սահմանված ժամկետներում վճարելու դեպքում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացվի լիազոր մարմնին:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը մասնակի լուծելու մասին պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով Պատվիրատուն այն հրապարակում է տեղեկագրում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատ.՝ Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Լ. Քալաշյան
Կատ.՝ ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/1-3 ծածկագրով գնման ընթացակարգի գնման համակարգող Խ. Զազյան
Հեռ.՝ +374 94 27 07 00, +374 231 5 36 63 /520/